ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի փոխադարձաբար վերացման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լեհաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հավաստելով երկու պետությունների և ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունները և Հայաստանի Հանրապետության ու Լեհաստանի Հանրապետության միջև հետագա համագործակցությունն ամրապնդելու նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք ունեն վավերական դիվանագիտական անձնագրեր, կարող են մուտք գործել Լեհաստանի Հանրապետության տարածք և գտնվել այնտեղ ինսուն (90) օր ժամկետով՝ առանց որևէ մուտքի արտոնագրի:

2. Լեհաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն վավերական դիվանագիտական անձնագրեր, կարող են մուտք գործել Հայաստանի Հանրապետության տարածք և գտնվել այնտեղ ինսուն (90) օր ժամկետով՝ առանց որևէ մուտքի արտոնագրի:

Հոդված 2

1. Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք հանդիսանում են դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկի անդամներ, Լեհաստանի Հանրապետության տարածքում նստավայր ունեցող միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչներ կամ այդ միջազգային կազմակերպությունների պաշտոնյաներ և քանի դեռ կրում են վավերական դիվանագիտական անձնագրեր, կարող են մուտք գործել Լեհաստանի Հանրապետության տարածք և գտնվել այնտեղ առանց որևէ մուտքի արտոնագրի՝ իրենց ծառայության ողջ ընթացքում:

2. Լեհաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք հանդիսանում են դիվանագիտական ներկայացուցչությունների կամ

հյուպատոսական հիմնարկի անդամներ, Հայաստանի Հանրապետության տարածքում նստավայր ունեցող միջազգային կազմակերպություններում Լեհաստանի Հանրապետության պաշտոնական ներակայացուցիչներ կամ այդ միջազգային կազմակերպությունների պաշտոնյաներ և քանի դեռ կրում են վավերական դիվանագիտական անձնագրեր, կարող են մուտք գործել Հայաստանի Հանրապետության տարածք և գտնվել այնտեղ առանց որևէ մուտքի արտոնագրի՝ իրենց ծառայության ընթացքում:

3. Սույն երկկողմանի համաձայնությունը տարածվում է 1-ին և 2-րդ կետերում հիշատակված անձանց ընտանիքների անդամների վրա, քանի դեռ նրանք կրում են վավերական դիվանագիտական անձնագրեր:

Հոդված 3

1-րդ և 2-րդ հոդվածներում նշված անձինք կարող են մուտք գործել մյուս Պայմանավորվող կողմի տարածք միջազգային երթևեկության համար նախատեսված սահմանակետերով:

Հոդված 4

Սույն Համաձայնագիրը չի ազդում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի՝ այն անձանց մուտքը կամ նրանց մնալը մերժելու իրավունքի վրա, որոնց ներկայությունը այդ Պայմանավորվող կողմի տարածքում անցանկալի է:

Հոդված 5

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրեն իրավունք է վերապահում կասեցնել սույն Համաձայնագրի վերոհիշյալ դրույթները լիովին կամ մասամբ՝ ելնելով պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության պահպանման կամ այլ լուրջ պատճառներից:

2. Պայմանավորվող կողմը դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող կողմին պետք է անհապաղ ծանուցի նման կասեցման և վերջինիս վերացման մասին:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը պետք է փոխանակեն վավերական դիվանագիտական անձնագրերի նմուշները ոչ ուշ, քան դրանց գործածության մեջ մտնելուց երեսուն (30) օր առաջ:

Հոդված 7

1. Սույն Համաձայնագիրը կնքված է անորոշ ժամկետով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցմամբ դադարեցնել սույն Համաձայնագիրը: Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է Պայմանավորվող կողմին դրա մասին ծանուցելուց 3 ամիս հետո:

3. Սույն Համաձայնագրում Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ կատարված որևէ լրացում ուժի մեջ է մտնում այդ լրացումը հաստատելու մասին Պայմանավորվող կողմերի հայտագրերի փոխանակման օրվանից:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի ազգային օրենսդրությամբ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված բոլոր ընթացակարգերը կատարելու մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցման ստացման օրվանից երեսուն (30) օր հետո:

Կատարված է Երևան քաղաքում 1998 թվականի նոյեմբերի 24-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լեհերեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի հունվարի 1-ից: